

[illegible]



MARCHÉ ADONIS

Un univers de fraîcheur

Ste-Catherine - Griffintown - Anjou - Sauvé
Place Vertu - DDO - Brossard - Laval - Laval Est - Gatineau
Scarborough - Mississauga

www.groupeadonis.ca /



«Թիւերը Գեղեցիկ Եմ, Սակայն Անոնք Հիմնաւորումի Կը Կարօտին» Կ'ըսէ Արթուր Խաչատրեան

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինի անդամ Արթուր Խաչատրեան «Ազատութիւն» ձայնասփիւռ կայանին հետ ունեցած գրոյցին ընթացքին դժուարացած է պատասխանել այն հարցումին, թէ վարչապետ Նիկոլ Փաշինեանի այս օրերուն ներկայացուած եւ մինչեւ 2050 թուականը իրականացուելիք ռազմավարական նպատակները իրատեսակա՞ն են, թէ՞ ոչ: Ան ըսած է, թէ թիւերը գեղեցիկ են, բայց անոնց հիմնաւորումները գոյութիւն չունին:

«Եթէ կ'ուզենք տնտեսական յաջողութիւն արձանագրել, պետութեան դերակատարութիւնը՝ իբրեւ տնտեսական քաղաքականութիւն իրականացնող, պէտք է շատ աւելի մեծ ըլլայ, իսկ թիւերը իսկապէս գեղեցիկ թիւեր են: Սերժ Սարգսեանն ալ 2040-ի համար գեղեցիկ թիւեր տուաւ: Գեղեցիկ թիւեր ըսելը շատ դիւրին է, խնդիրը զանոնք հիմնաւորելն է, բայց քանի հիմնաւորումը չեմ տեսած, չեմ կրնար ըսել՝ անոնք իրատեսակա՞ն են, թէ՞ ոչ: 30 տարուան հեռանկարի մասին է խօսքը, այսինքն՝ պէտք է դենք եւ նայինք, թէ 30 տարուան ընթացքին մարդիկ ի՞նչ գործունէութիւն կը կանխատեսեն, ի՞նչ արդիւնքի կ'ուզեն հասնիլ: 30 տարուան մասին է խօսքը, 30 տարի առաջ այսօր դեռ Խորհրդային Միութիւն կար», ըսած է Խաչատրեան: Արթուր Խաչատրեանի կարծիքով՝ Փաշինեանին ներկայացուցածը ոչ թէ ծրագիր է, այլ փափաք:

«Թուրքիան Միշտ Պիտի Աջակցի Ազրայէճաճի Բոլոր Ոլորտներուն Մէջ. Ներառեալ Լեռնային Ղարաբաղի Տագնապի Լուծման Մէջ» Կ'ըսէ Զաւուշօղլու

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մեւլութ Զաւուշօղլու Անգարայի մէջ թուրք դեսպաններու 11-րդ խորհրդաժողովին ընթացքին անդրադարձաւ Ազրայէճաճի հետ «եղբայրական» յարաբերութիւններուն:

«Թուրքիան միշտ պիտի աջակցի Ազրայէճաճին բոլոր ոլորտներուն մէջ, ներառեալ՝ դարաբաղեան տագնապի լուծման մէջ», ըսաւ ան:

Զաւուշօղլու նաեւ յայտնեց. «Կիւրոսը մեր ազգային դատն է: Թուրք կիպրացի ժողովուրդի հաւասարութիւնն ու անվտանգութիւնը հրամայական են: Այս հիմամբ որեւէ լուծում չենք մերժեր»:

«Միջին Արեւելքի մէջ բոլոր առնչակից կողմերուն մեր միակ պատգամը նոյնն է. «Եթէ մեզի հետ գործակցիք, բոլորը կը շահին», յայտնեց ան:

Զաւուշօղլու նաեւ նշեց. «Այնպիսի ժամանակըջանի մը մէջ, ուր առաւելագոյն կարիքը կայ չըջանին փարելու, շատ ցաւալի է, որ չըջանի երկիրները միասնական ըլլալէ շատ հեռու են: Թուրքիան պիտի շարունակէ ամէն գնով պաշտպանել պաղեստինեան դատը»: Թրքական դիւանագիտութեան պետը զգուշացուց բոլորը, թէ «Խորիպի մէջ արձանագրուելիք մարդկային ողբերգութիւնը աւելի ահաւոր պիտի ըլլայ, քան 2015-ին տեղի ունեցածը»:

Ըստ Արցախի Ազգային Ժողովի «Դաշնակցութիւն» Խմբակցութեան Ղեկավարին. «Արցախի Մէջ Անկայունութիւնը Անթոյլատրելի Է»

Արցախի Ազգային ժողովի «Դաշնակցութիւն» խմբակցութեան ղեկավար Արմէն Սարգսեան «Այսօր»-ի լրագրողին հետ ունեցած գրոյցին ընթացքին ըսաւ, թէ 5 օգոստոսին Ստեփանակերտի Վերածնունդի հրապարակին վրայ տեղի ունեցած հանրահաւաքը Հայաստանի եւ Արցախի ղեկավարներու միացեալ հանդիպում էր ժողովուրդին հետ, ուստի՝ ողջունելի:

Ան նշեց, որ ամէն մէկ քաղաքական ուժ ունի իր դիրքորոշումը՝ տարբեր քաղաքական հարցերու վերաբերեալ, եւ Դաշնակցութեան քաղաքականութեան առաջնահերթութիւնը եղած է ու կը մնայ Արցախի միացումը Հայաստանին:

«Դաշնակցութեան համար Արցախը Հայաստան է: Հետեւաբար այս հանրահաւաքին վերաբերեալ իմաստ չենք տեսած յայտարարութեամբ հանդէս գալ, որովհետեւ Դաշնակցութեան քաղաքականութեան առաջըը եւ առաջնահերթ նպատակը այս միասնութիւնն է: Մենք կողմ ենք Արցախի եւ Հայաստանի ոչ թէ ուժեղ կապին, այլ միասնութեան, եւ այդ պարագային ինչպէ՞ս կրնանք մենք նման ձեռնարկի մը ներկայ չըլլալ», ընդգծեց Ա. Սարգսեան:

Անդրադառնալով հանրահաւաքին Հայաստանի եւ Արցախի ղեկավարներուն մասնակցութեան՝ ան դիտել տուաւ, որ սկիզբը, երբ յայտարարուեցաւ, որ հանրահաւաքին ներկայ պիտի ըլլայ միայն Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը, քիչ մը տարօրինակ էր, բայց յետոյ, երբ յայտարարուեցաւ նաեւ Արցախի նախագահ Բակո Սահակեանի մասնակցութեան մասին, ըստ պատգամաւորին, Հայաստանի եւ Արցախի ղեկավարներու նման նախաձեռնութիւն պէտք է միայն ողջունել:

«Մեզի միշտ կը մտահոգէ Արցախի մէջ հաւանական ներքին անկայունութիւնը, քանի որ ատիկա կրնայ դառնալ մեր «Աքիլեսեան դարչապարը»: Եւ կը կարծեմ, որ այս հանրահաւաքին միջոցով քայլ մը եւս կ'առնուի ստեղծուած քաղաքական մթնոլորտի լիցքաթափման եւ Արցախի մէջ ներքաղաքական աւելի հանգիստ իրավիճակ ապահովելու համար», նկատել տուաւ Ա. Սարգսեան:

Շարունակելով ներկայացնել Դաշնակցութեան տեսակէտները՝ Հայաստանի եւ Արցախի միացեալ օրակարգին վերաբերեալ, պատգամաւորը ըսաւ, թէ Հայաստանը պէտք է ըլլայ ո'չ միայն Արցախի անվտանգութեան, այլ նաեւ անկախութեան երաշխաւորը: «Եւ, հետեւաբար, եթէ Հայաստանի վարչապետը կու գայ եւ Արցախի նախագահին հետ միասին հանդիպում կ'ունենայ Արցախի ժողովուրդին հետ, ապա, Հայաստանի իշխանութիւնը կը փորձէ քայլ կատարել նաեւ Արցախի անկախութեան երաշխաւորը ըլլալու հարցին մէջ», չեչոյց ան:

Այցելեցէք hitunes.ca կայքէջը եւ օրական 24 ժամ ունկնդրեցէք Սառա Եղիայեանի կողմէ ընտրուած հայկական երգերը HITUNES.CA	Ունկնդրեցէք triktrak.ca կայքէջի հայկական համացանցային ռադիոժամի երգերը օրական 24 ժամ, իսկ ամեն հինգշաբթի երեկ. ժամը 8:00 - 9:00 լսեցէք շահեկան հարցազրոյցներ TRIKTRAK.CA
---	---

«ԲԱՍՏՏՐՄԱՃԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-ի ԿՐԹԱԹՈՇԱԿ

PASDERMAJIAN FOUNDATION SCHOLARSHIP FONDATION PASDERMAJIAN BOURSE D'ÉTUDES

«Բաստրմաճեան Հիմնադրամ»-ի 2019-2020 ուսումնական տարեշրջանի համալսարանական կրթաթոշակի դիմումագրերը պիտի ընդունուին մինչեւ `1 Նոյեմբեր 2019

Թեկնածուն պարտի ըլլալ՝

- Համալսարանական ուսանող՝ Պսակաւոր, Մագիստրոս կամ Դոկտորական աստիճանի:
- Յաջող իր ուսումնական արդիւնքներուն մէջ եւ գործունեայ տեղական եւ ի մասնաւորի հայկական կազմակերպութիւններէ եւ միութիւններէ ներս:
- Շրջանաւարտ՝ Մեծն Մոնթրէալի մէջ գործող հայկական երկրորդական վարժարանէ մը: Եթէ վարժարանը այդ ուսումնական տարեշրջանի ընթացքին երկրորդական 5րդ կարգ չունի, ուրեմն տուեալ վարժարանի բարձրագոյն կարգի աշակերտները՝ շրջանաւարտ կը նկատուին:

Բարեհաճեցէ՛ք 2019-2020 տարեշրջանի դիմումագրերը պատուիրել կապուելով հետեւեալ ե-նամակի հասցէին՝ pasdermajian.scholarship@gmail.com

Նկատի պիտի առնուին միայն լրիւ ամբողջացած եւ ե-նամակով ուղարկուած դիմումագրերը, պահանջուած փաստաթուղթերով :

Այնճարի Ժամացույցին Պատմությունը

Ժամանակը բանալին է կեանքին, եւ կեանքը կ'իմաստաւորուի բարի գործերով: Արդեօ՞ք կրնանք աւելիով իմաստաւորել զայն՝ մեր շրջապատը սիրելով:

Երբ ժամանակը դանդաղած էր Մուսա Լեւոն կարիքաւոր գաղթականներուն համար, որոնք երկարամեայ հալածանքներէ ետք հաստատուած էին Այնճար՝ նոր կեանք մը սկզբնաւորելու, պայքարելով սովի, համաճարակներուն եւ ամէն տեսակի դժուարութիւններու դէմ, ահա միսիոնարուհի մը ոտք կը դնէ Այնճար:

Բ. Համաշխարհային պատերազմէն ետք, 1947-ին, քոյր Հետուիկ Այնահանուլին գուիցերիացի ըլլալուն համար արտօնութիւն ունէր ճամբորդելու եւ ահա կու գար Պէյրուի՝ տեսնելու, թէ ինչպէ՞ս եւ ո՛ւր կրնար օգտակար ըլլալ հայ ժողովուրդին, տրուած ըլլալով, որ Հիլֆսպունը կ'օգնէր միայն հայերուն: Բայց դէպքերը տարբեր ձեւով կ'ընթանան, երբ ան կը հանդիպի վեր. Արամ Հատիտեանին, որ կը հրաւիրէ զինք Այնճար:

Քոյր Հետուիկ այս այցելութենէն հրաժարփած՝ տարիներ ետք իր յուշերուն մէջ պիտի գրէր. «Բնաւ պիտի չմոռնամ այդ օրը, երբ Այնճար ոտք կոխեցի առաջին անգամ: Տաք էր շատ, շուք չկար, անտանելի փոշի, հովը անողորմ կը փչէր: Աչքերս արցունքոտեցան եւ բորբոքեցան: Զուր չկար, ելեկտրականութիւն չկար: Ինչպէ՞ս կրնայի հոն ապրիլ առանձին, հեռու քաղաքակրթութենէ»:

Կը վերադառնայ, եւ պատասխանը ո՛չ կ'ըլլայ. «Ձեմ կրնար Այնճար ծառայել, անկարելի կացութիւն է»:

Այսպէս հրաժեշտ կու տայ պատուելիին:

Բայց իր սրտին մէջ պայքար մը կը սկսի: Տրամաբանութիւնը կ'ըսէր. «Ո՛չ, Այնճար պիտի չերթամ, Պէյրուի պիտի մնամ», բայց խիղճը կ'ըսէր. «Այս է քու ճամբադ: Այնճարի ժողովուրդը քեզի պէտք ունի»:

Քանի մը օր տառապելէ, գիշերները արթուն մնալէ եւ մտածելէ ետք պատրաստ էր «այո՛»-ն ըսելու՝ այս անգամ ուրախութիւն մը պատելով սիրտն ու հոգին:

Եթէ իրապէս կ'ուզենք հասկնալ քոյր Հետուիկի գործը Այնճարի մէջ, պէտք է վերլուծենք իր նամակը, որ գրած էր Այնճարի Հիլֆսպունտ միսիոնարութեան Զուիցերիոյ եւ Գերմանիոյ մէջ 1972-ին, 25 տարի ապրելէ եւ ծառայելէ ետք:

«Աստուած իր խօսքը իրական դարձուց, երբ այս անապատը մտայ եւ այս խօսքը կու գար Յոբի գիրքին 22-րդ գլխուն 28-րդ համարէն. «Եթէ դիտաւորութիւն մը պիտի ունենաս, քեզի պիտի յաջողի ու ճամբաներուդ վրայ լոյս պիտի ճառագայթէ»:

«Սիրելի՛ բարեկամներս, ես ծրագիր

չունէի Այնճարի գործին համար, բայց կը զգայի, որ ուժ մը զիս կը հրէր աւելին ընելու, եւ ահա Աստուծոյ օրհնութիւնները միշտ կը թափէին առատ»:

Երբ Պէյրուի թարեկամները կը փորձէին համոզել զինք, որ չերթայ Այնճար, որովհետեւ այնճարցիները դժուար մարդիկ էին, եւ դիւրին չէ Այնճար ապրիլը, քոյր Հետուիկ աւելի հաստատամիտ կը դառնար եւ կ'ըսէր. «Իրենք ինծի աւելի պէտք ունին, քան՝ որեւէ այլ տեղի հայերը»:

Ու ահա օր մը քոյր Հետուիկ՝ մէկ պայուսակով, կու գայ Այնճար, աւելի ճիշդ էր ըսել՝ կու գայ անապատ, ճահիճ:

Պատուելին իր տունը կը տրամադրէ քոյր Հետուիկին՝ Փրանսական սենեակ մը չորս մեթրով չորս մեթր տարածութեամբ: Ան մէկ անկիւնը կը գործածէ որպէս դարմանատուն, մէկ անկիւնը՝ որպէս խոհանոց, մէկ անկիւնը՝ որպէս ննջարան եւ միւսը՝ որպէս գրասենեակ, եւ ահա կը սկսի գործը:

Շատ կարճ ժամանակի ընթացքին կը շահի Այնճարի ժողովուրդին վստահութիւնը:

Պէտքերը, պահանջները շատ էին: Մէյ մը այցելութիւն կու տար հիւանդներուն: Մանուկներ քովը գալով՝ կը խնդրէին, որ Աստուածաշունչ կարգար իրենց:

Տիկիներն հաւաքներ կը խնդրէին: Առաքելական եկեղեցւոյ քահանան՝ Վահան Քենտիրճեան, կը հրաւիրէր զինք, որ կիրականօրեայ դպրոցը առաջնորդէր: Նաեւ աւետարանական եկեղեցիին պատգամախօսն էր, որովհետեւ հոն մնալուն պատուելի չկար:


Ամէն կողմէ կը խնդրէին, որ քոյր Հետուիկ բան մը ընէր: Նոյնիսկ ձեռագործ աշխատիլ կը սորվեցնէր փոքրիկ աղջիկներուն: Յետոյ Հայ աւետարանական եկեղեցիներու խորհուրդը առաջարկ մը կը ներկայացնէ իրեն:

Անոնք կ'առաջարկեն, որ քոյր Հետուիկ Այնճարի Հայ աւետարանական վարժարանին տնօրէնութիւնը ստանձնէ: Բայց անշուշտ ան շատ կտրուկ կը մերժէ՝ ըսելով, որ դպրոցը նախնական տուեալները չունի դպրոց կոչուելու:

Բայց պատասխանատուները չեն յուսահատիր եւ հաստատ կը մնան իրենց առաջարկին վրայ, մինչեւ որ քոյր Հետուիկ տեղի կու տայ եւ կ'ընդունի:

Տնօրէնութիւնը ստանձնելէ ետք, մէկ ծրագրէն միւսին անցնելով, դպրոցը կամաց-կամաց կը մեծնայ, աշակերտները կը շատնան, եւ գիշերօթիկի դրուութիւն ալ կը ստեղծուի:

Գիշերօթիկի աշակերտները Փրանսական տուներու մէջ կը բնակին, մին-



չեւ որ ընթացք առնէ գիշերօթիկի շէնքի կառուցումը. գործը կը մեծնայ եւ կը ծաւալի, եւ դպրոցը կ'ունենայ 900 աշակերտ: Գիշերօթիկը աշակերտներ ընդունած է տարբեր երկիրներէ, ինչպէս՝ Թուրքիա, Քուէյթ, Իրաք, Սուրիա, Պուլկարիա, Եթովպիա:

Քոյր Հետուիկ մինակ չմնաց այս գործին մէջ, իրեն միացան երկու այլ քոյրեր՝ քոյր Մարի Ռոք եւ քոյր Հաննա Նիչքէ:

Քոյրերը տարբեր տեսակի գործեր ալ ըրին, անոնք պարտէզներ ցանեցին, պտղատու ծառեր բերել տուին Զուիցերիայէն եւ բաժնեցին ժողովուրդին: Հիւանդները հոգացին, այսպէս, անոնք մէկ բարդ գործէն միւսին անցան. Տէրը օրհնեց իրենց գործերը: Եթէ այս օրուան պայմաններով նայինք, հրաշագործութիւն մըն էր պատահածը: Այսքան մեծ գործի ձեռնարկել՝ փոքր պայմաններով, փոքր լուծմաներով, փոքր նուիրատուութիւններով: Քոյրերուն պատրաստակամութիւնը մեծ էր՝ օգտակար ըլլալու ժողովուրդի մը, որ ձգած էր իր հայրենիքը՝ Մուսա Լեռը երկու անգամ, մէկը 1915-ին՝ պայքարելով թրքական զօրքին դէմ, եւ երկրորդը 1939-ին՝ տեղահան ըլլալով եւ գաղթելով:

Պայքարող ժողովուրդին հանդէպ հիացմունքն է, որ վառած է քոյրերուն ջաշը, որպէսզի անոնք օգտակար ըլլան ժողովուրդի մը, որ չի վախնար թշուառութենէ, աղքատութենէ եւ որոշած է ապրիլ հայօրէն եւ հաւաքականօրէն. քոյրերուն գործին գաղտնիքը եւ մղիչ ուժը քրիստոնէական սէրը եղած էր:

Շատ կարեւոր նուէր մըն ալ ըրին քոյրերը գիւղին:

Երբ ոչ ոք ժամացոյց ունէր եւ ժամանակի հասկացողութեան ճշգրտահունքները բացակայ էր գիւղէն, անոնք կառուցեցին աշտարակ-ժամացոյց մը, որ

գետեղուեցաւ գիւղին կեդրոնը եւ մարդոց կեանքերը հեղասահ դարձուց: Ժամացոյցը զարկաւ ամէն ժամ եւ տարիներ շարունակ մնաց հաւաքական վայր, համագիւղական հաւաքներու, սկսուտական բանակումներու:

Այսօր մենք՝ որպէս այնճարցիներ, ժառանգութիւն մը ունինք, որ կու գայ քոյրերէն, որոնք պահապան հրեշտակի նման աշխատեցան, հիմնեցին եւ լաւագոյնը ըրին այս գիւղի պատմութեան համար:

Այսօր, Այնճարի 80-ամեակին առիթով, պահենք այս ժառանգութիւնը՝ վերաշինելով ժամացոյցը, որ պիտի խորհրդանշէ մեր արժէքները եւ յօդակապէ մեզ մեր պատմական արմատներուն: Անիկա յոյս պիտի ներշնչէ ապագայի նկատմամբ եւ առիթ դառնայ ժողովրդային մէկտեղումին, ինչո՞ւ չէ, նաեւ զբօսաշրջական հրապոյր պիտի դառնայ եւ տեղատուական հիմ մարդկային ծառայութեան՝ կոչելով զայն «Ժամանակի հրաշալիքը»:

Այնճարի հիմնադրութեան 80-ամեակին առիթով, ժամացոյցի վերականգնման աշխատանքները ընթացք առած են արդէն՝ իբրեւ յուշարար համագիւղական զօրաշարժի: Անոր շինարարութեան ամբողջացումը առաջնահերթութիւն դարձած է, իսկ բացումը նախատեսուած է 1 սեպտեմբերին:

Այս առիթով յառաջացած է ու կը գործէ աշխատանքային խումբ մը, կատարուած են նուիրատուութիւններ, սակայն տակաւին կարելի ու փափաքելի է նեցուկ կանգնիլ այս ծրագրի յաջողութեան, որովհետեւ ասիկա խորհրդանշական մեծ իմաստ ունի իւրաքանչիւր այնճարցիի համար:

ՆԱԹԱԼԻ ՔԵՆՏԻՐՄԵԱՆ

Ուրախութեամբ կը յայտարարենք որ Հայ Օգնութեան Միութեան Թորոնթոյի «Ռուբինա» Մասնաճիւղի «Տոհմիկ Օր»ը այս տարի ձօնուած է՝

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ

Զետնարկը տեղի պիտի ունենայ
Շաբաթ 23 Նոյեմբեր 2019ին
Հայ Կեդրոնէն ներս

Կը խնդրուի չխաչաձեւել

ՀՕՄԻ «Ռուբինա» Մասնաճիւղի
Տոհմիկ Օրուայ Յանձնախումբ
Թորոնթո

Ունկնդրեցէ՛ք Գանատայի տարածքին սփռուող հայկական ռատիոժամերը՝

ՎԱՆԳՈՒԿԸՐ- «Armenian Variety Show» Coop Radio 100.5 FM Երեքշաբթի երեկոները ժամը 6:00-7:00
ԹՈՐՈՆԹՕ- «Կիլիկիոյ Ձայն» CHTO AM 1690 Կիրակի երեկոները ժամը 8:00-11:00
ՄՈՆԹՐԵԱԼ- «Հայ Կեդրոնի Ձայն» 105.1 FM Երկուշաբթի երեկոները՝ ժամը 9:30-12:00 Շաբաթ առաւօտները ժամը՝ 7:30-9:30 Կիրակի առաւօտները ժամը 7:00-8:00 «Վանայ Ձայն» 1450 AM Երկուշաբթի երեկոները ժամը 8:00-10:00
ՉԱՄԻԼԹԸՆ- «Հայ Կեդրոնի» ռատիոժամ CFMU 93.3 FM Կիրակի առաւօտեան 10:00-11:00 cfmu.mcmaster.ca

Վանգուվերի ՀՄԸՄ-ի մետալակիր մարզիկներուն ողջոյնի հանդիսութիւն



Շաբաթ, 3 Օգոստոս 2019-ի երեկոյեան, Գլարա եւ Վահիկ Յակոբեաններու Ուէսթ Վանգուվերի բնակարանին մէջ հաւաքուած էին 140-էն աւելի վանգուվերա-հայեր՝ ողջունելու ՀՄԸՄ-ի Վանգուվերի մասնաճիւղին յաղթական վերադարձը ՀՄԸՄ-ի 44-րդ նաւասարգեան խաղերէն:

Վանգուվերի ՀՄԸՄ միաւորի ատենապետուհի քոյր Լիսա Հոքիքեան իր սրտի խօսքը փոխանցեց խաղերուն մասնակից 27 մարզիկ քոյր-եղբայրներուն, որոնք ձեռք բերին 17 մետալներ՝ ոսկի, արծաթ եւ պրոնզ, ապա տեղի ունեցաւ մետալներու բաշխում:

Գնահատական խօսքեր փոխանցեցին վարչութեան անդամ մարզիչներ եղբ. Կարօ Քերզեան եւ եղբ. Ռոպէր Հոքիքեան: Յատուկ շնորհակալութիւն յայտնուեցաւ Յակոբեան բնտանիքին, նուիրատուներուն՝ ծնողներուն, ներկաներուն, ՀՅԴ «Ս. Վրացեան» կոմիտէութեան եւ բոլոր անոնց, որոնց աջակցութեամբ կարելի եղաւ այս գործը ի կատար ածել:

Կարճ հանդիսութենէն ետք տեղի ունեցաւ ճաշկերոյթ ապա հրախաղութիւն (fireworks), որմէ ետք երեկոն շարունակուեցաւ ազգային եւ յեղափոխական երգերով:

Նշենք, որ այս առիթով, ՀՄԸՄ-ի գործունէութեան զարկ տալու համար հանգանակուեցաւ 4 հազար տոլարի գումար մը:

Գանատայի Հայոց Թեմի Կիրակնօրեայ դպրոցներու ուսուցչական կազմերու միօրեայ համագումար



Մանուկներն ու պատանիները քրիստոնէական եւ հայեցի կրթութեամբ դաստիարակող Կիրակնօրեայ դպրոցները կը վայելեն Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բարդէյ Արք. Չարեանի անվերապահ ու յատուկ հոգածութիւնը: Արդարեւ, հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր եւ կազմակերպութեամբ Ազգային Առաջնորդարանիս Քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքին, Շաբաթ, 10 Օգոստոս 2019-ին, Քինկսթընի մէջ տեղի ունեցաւ Թեմի Կիրակնօրեայ դպրոցներու ուսուցչական կազմերու միօրեայ համագումար:

Համագումարին, որպէս դասախօս, հիւրաբար հրաւիրուած էր Մոնթրէալի Ս. Խաչ Մայր տաճարի հոգեւոր տեսուչ Գերապատիւ Տ. Միւսոն Ծ. Վրդ. Ազնիկեան:

Առաջնորդ Սրբազան Հօր կողքին, համագումարին ներկայ էր Առաջնորդական Փոխանորդ եւ Քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչ Գերապատիւ Տ. Գեղարդ Ծ. Վրդ. Քիւսպէկեան:

Համագումարը սկիզբ առաւ հաւաքական «Տէրունական» աղօթքով, Կիրակնօրեայի մաղթերով եւ Ս. Ներսէս Շնորհալիի «Զգործա Չեռաց Մերոց» աղօթքով:

Բացման խօսքով հանդէս եկաւ Գերապատիւ Տ. Գեղարդ Ծ. Վրդ. Քիւսպէկեան: Ան յանուն Առաջնորդ Սրբազան Հօր ողջունեց ներկաները եւ ներկայացուց համագումարին նպատակը, որ կը միտի ի մի խմբել Կիրակնօրեայ դպրոցներու ուսուցչական կազմերը եւ անոնց փոխանցել անհրաժեշտ գիտելիքները՝ հայ եկեղեցւոյ դաւանանքին եւ եկեղեցագիտական նիւթերու մասին: Այնուհետեւ, Հայր Գեղարդ կատարեց Ս. Գրային խորհրդածութիւն մը:

Ապա, Հայր Միւսոն ներկայացուց իր դասախօսութիւնը, որուն մէջ արծարծեց

Թեմ... Ծար. էջ 10

Այցելեցեք hitunes.ca կայքէջը եւ օրական 24 ժամ ունկնդրեցեք Սառա Եղիայեանի կողմէ ընտրուած հայկական երգերը HITUNES.CA	Ունկնդրեցեք triktrak.ca կայքէջի հայկական համացանցային ռատիոժամի երգերը օրական 24 ժամ, իսկ ամէն հինգշաբթի երեկ. ժամը 8:00 - 9:00 լսեցեք շահեկան հարցազրոյցներ TRIKTRAK.CA
--	--

RITA BAGHDASSARIAN Conseillère en Sécurité Financière Revenu Garantie Viager COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELI) • CRÉATION D'HÉRITAGE • REER • FERR RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉ • ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE & COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT 3820, boul. Lévesque Ouest, Bureau 101, Laval Qc. H7V 1E8 Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262 ritabagh@yahoo.com	VIZUALIS optométriste DR SHANT DONABEDIAN Centre d'Achat Fairview • Fairview Mall Pointe Claire 514 695 2555 • VIZUALIS.CA	Danièle Papazian, MSc. Courtier immobilier C 514.234.6799 dpapazian@remax-quebec.com www.remaxducartier.com RE/MAX DU CARTIER Agence immobilière 1290, rue Bernard Ouest, bureau 100 Outremont Qc H2V 1V9 T 514.271.2131
Assura Bien inc. Cabinet en assurance de dommages et de services financiers Ապահովագրական գրասենյակ KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN 970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc, H4T 1W7 T: 514.903.3999	BOURQUE KABABEJIAN NOTAIRES NOTAIRES ET CONSEILLERS JURIDIQUES Un rendez-vous avec le savoir-faire GEORGE KABABEJIAN, LL.B., J.D., D.D.N. NOTAIRE ET CONSEILLER JURIDIQUE 465, RUE SAINT-JEAN BUREAU 801 MONTREAL, QUEBEC H2Y 2R6 TÉLÉPHONE : 514 842-4181, POSTE 248 FAX : 514 842-6808	JACOB & JACOB BODY SHOP CAS D'ASSURANCES 6280 St. Jacques, Montréal, Québec, H4B 1T6 Tél: (514) 484 - 7945 Fax: (514) 484 - 2487 jacobaubody@bellnet.ca www.carrosseriejacobetjacob.ca
Elie Berberian Courtier immobilier / Real Estate Broker C 514.519.3543 B 514.333.3000	KORONA JOAILLIERS • 1964 • JEWELLERS Daniel Torosian 3933 St Martin O. Coin Curé-Labelle Laval, Qc. 514-274-5555 450-688-5515 korona.ca	KRIKOR MAROUNIAN RLU Independent Financial Security Broker Life Insurance • Disability & Critical Illness Insurance Group Insurance • Pension Plans Travel/Visitor Medical Insurance 11820 General Giraud Montreal, QC H4J 2H6 Res: (514) 332-7021 Fax: (514) 332-7376 Cell: (514) 927-2666 krikormar@gmail.com
FIVE STAR ELECTRIQUE CINQ ÉTOILES SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING RESIDENTIAL-COMMERCIAL BEDROS NALPATIAN 442, LA RIVIÈRE, LAVAL, QC. TEL: 514 - 497- 5155 FAX: 450 - 689- 3997 E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM	SOSIE DERNERSESSIAN MORTGAGE AGENT LICENCE #M12001830 718 Gordon Baker Road, Unit 204A, Toronto Ontario M2H 3B4 416.662.6650 cell centum.ca/sosie_dernersesian	Pharmacie Levon Benonian et Mher Koubelian Inc. Pharmaciens-propriétaires 3915, Boulevard Samson Laval, QC H7W 2G1 T 450 688-4111 F 450 681-5525 Lun. au vend. : 8h30 à 21h Sam. et dim. : 9h à 17h Infirmière (jeudi) : 8h30 à 15h LIVRAISON GRATUITE Proxim

Լոյսիճ Սպասող Սեւրի Դաշնագրին Ներքին Հրաւերը (100-ամեակի Սեմիճ)

Լոյսի՝ մշակոյթի եւ քաղաքակրթական նուաճումներու հաւատացող ժողովուրդ մը ըլլալով հանդերձ, ազգը կը սպասէ հայ քաղաքական մտքի լուսաւորման, առաւել պայծառացման, կայացման։ Դարերէ ի վեր մեզ ուղեկցող ճշմարտութեան մասին է խօսքը, որուն տիրութիւն ընելու եւ լաւապէս հասկնալու համար շատ սուղ վճարած ենք ազգովին։

Ճիշդ է, որ ազգերու պատմութեան հոյովոյթը փափաքներու հարթակ մը չէ եղած, ինչպէս նաեւ աշխարհաքաղաքական դժան ձեւաւորումները, «եթէ»–ներու ցանկութեամբ չեն ընթացած, այլ անոնք տեղի ունեցած են ուժեղի, տիրապետողի, բարբարոսի եւ յափշտակութեան, այսպէս ըսած, անեղ տրամաբանութեամբ։

10 օգոստոս 1920։

Պատմաքաղաքական արժէք ունեցող թուական մըն է անտարակոյս, որով օրուան հիմնական աշխարհակշիռ ուժերը՝ Մեծն Բրիտանիա, Ֆրանսա, Իտալիա եւ Ճափոն, յետ Առաջին համաշխարհային պատերազմի աւարտին, ուզեցին ստեղծել աշխարհաքաղաքական նոր համակարգ մը։ Հակառակ այն իրողութեան որ արդէն գոյութիւն ունէր Սալքս Փիքօ կոչուած համաձայնագիրը (16 մայիս 1916), որով կը գծուէր նոր Մերձաւոր Արեւելք մը, ստեղծելով գաղութարար ալիքներու տեսականի։

Փաստօրէն, գերմանաթրքական զինակցութիւնը ստացած էր այնպիսի ապտակ մը, զգետնող հարուածներու տարափ, որ Մուտրոսի համաձայնագիրով (30 հոկտեմբեր 2018), արդէն հողային զիջումներու դէմ յանդիման կը գտնուէր։ Երբեմնի Օսմանեան կայսրութիւնը կ'ապրէր իր ամենալատ ժամանակները։

Թուրքը գործադրած էր դարու մեծագոյն ոճիրը՝ ցեղային մաքրագտում, բնօրրանէ հայոց տեղահանութիւն եւ Արեւմտահայաստանի բռնադրաւում։

Հայութիւնը, կորսնցնելէ ետք դարաւոր հայրենիքն ու 1,5 միլիոն հայերու արիւնը, շնորհիւ իր ներքին զօրութեան, հաւաքական կամքին ու ազգային շունչին, թուիչք կ'առնէր պարտադրուած դժուրքէն եւ կը կերտէր իր պետականութիւնը (28 մայիս)՝ ապագայ սերունդներու ժառանգելով ազատ ու անկախ ապրելու հայաբոյր տեսլականը։

Վեց դարեր առանց պետութեան ապրած հայ ժողովուրդը կը գերազանցէր ինքզինք։ Ֆետալական–յեղափոխական շարժումներն ու գէնքի դիմելու գիտակցական մակարդակի ամրապնդումը, այլապէս ստրուկի, տգէտի եւ ենթարկուողի ահաւոր հոգեբանութեան ներքեւ, ինչպէս նաեւ քաղաքական մտքի հասունացումը բաւարար գործօններ հանդիսացան հայոց վերապրու մին։

Առաջին Համաշխարհային պատերազմի բռնկումով եւ սարսափազուլ լիճակի ստեղծումով, գերմանաթրքական ռազմաքաղաքական դաշինքը գործադրեց սոսկալի ոճիրներ՝ ազգերու եւ պետութիւններու հաշուոյն։

Օրուան դաշնակից պետութիւնները, չշմած ստեղծուած իրավիճակէն, ամէն միջոցի կը դիմէին ի կատար ածելու աշխարհաքաղաքական իրենց նկրտումները։ Երբեմնի Կոստանդնուպոլիսը գրաւուած էր, Դաշնակից ուժեր պաշարած էին նեղուցները, ցամաքի վրայ տարբեր բանակներ կը կռուէին ընդդէմ գերմանական եւ թրքական ուժերու։ Հայութիւնը, իր կարգին, մասնակից էր համաշխարհային այս պատերազմին։ Փաստօրէն, տարբեր փուլերու եւ հանգամանքներու բերումով՝ հայկական ուժեր կը կատարէին իրենց սրբազան պարտականութիւնը՝ կռուիլ բարբարոս թշնամիին դէմ, ազատագրելու հայրենիքը եւ փրկելու մնացորդացը։

Իրաւացի է այն հաստատումը, որ հայութիւնը իր սահմանափակ ուժերով եւ կարելիութեամբ արդէն կը պատերազմէր Երզնկայէն մինչեւ Պաքու։ Եւ այս տեղի կ'ունենար դաշնակից ուժերու աչքին առջեւ։ Այլ խօսքով՝ գերակշիռ ուժ ունեցող պետութիւններ, իրագեկ էին կացութենէն եւ հայոց զոհողութենէն։

Նման ահաւոր պայմաններու տակ ծնունդ կ'առնէր Սեւրի դաշնագիրը։ Անկախ Հայաստանի պետութիւնը արդէն իսկ երկու տարին բոլորած էր։ Միջազգային ընտանիքը կը դիմէր համաձայնագիրի մը ստորագրութեան՝ մեկնելով իր սեփական ու աշխարհաքաղաքական շահերէն։ Հայութիւնը, իր կարգին, մասնակից կը դառնար այս քաղաքական աքթին՝ ներկայ գտնուելով յաղթանակ տարած ազգերու շարքին։

Սեւրի մէջ (Փարիզի մօտ) 18 երկիրներու ներկայացուցիչներ կը ստորագրէին դարու ամէնէն յիշատակելի փաստաթուղթը։ Զինադադարէն ետք, դաշնակից

ուժեր կը նախաձեռնէին նման դաշնագիրի մը վաւերացումին՝ խորքին մէջ զարկ տալով նորովի քարտէսագրութեան։ Ու ահա, աշխարհաքաղաքական բարդ իրավիճակի մը ծնունդ կը հանդիսանար, հետագայի Վուտրօ Ուիլսընի իրաւարար վճիռը (22 նոյեմբեր 1920), ուր յստակ եւ արդարօրէն կը գծուէր Նոր Հայաստանի իրաւաքաղաքական քարտէսը։

Այո՛, իր բնոյթով եղակի ու բովանդակութեամբ անկրկնելի վաւերագրութեան մը մասին է խօսքը։ Սեւրին յաջորդած ուիլսրենեան այս աքթը, 160 հազար քառ․ քմ տարածութեամբ ազատ ու անկախ Հայաստան մը ունենալու երազանքը, արդէն չօջափելի կը դառնար յանձինս դաշնակից ուժերու եւ Ամերիկայի հայասէր նախագահ Վուտրօ Ուիլսընի։

Երբ կը շեշտադրենք հայանպաստ քարտէսի իրաւական, քաղաքական ու փաստական կարեւորութիւնը, պարզապէս կ'ուզենք ընդգծել, որ քաղաքական կեցուածքի առընթեր, մտահան պէտք չէ ընել նաեւ ամերիկեան զինեալ ուժերու ներդրումը, քարտէսագրութիւնը՝ գետնի վրայ եւ տարածքային հսկայ աշխատանքի մը գործադրութեամբ։

Այլապէս, երբ ամէն քայլափոխի կը յիշատակենք Սեւրի դաշնագրին մէջ հայոց վերապահուած յօդուածները (88–93), որոնցմով կը յստականան հայոց իրաւունքի տարողութիւնը, այսինքն՝ Վանի, Բաղէշի (Պիթլիս), Կարինի (Էրզրում) եւ Տրապիզոնի նահանգներու պատկանելիութիւնը, աւելի՛ն. դէպի ծով ելք մը ունենալու մտածումը, խորքին մէջ, մեզի՝ հայ ժողովուրդին դարաւոր երազանքին չօջափելիութիւնը կը փաստարկուի, առանց վերապահութեան, հաստատապէս եւ անժամանցելիօրէն։

Հայաստանի առաջին հանրապետութեան պատուիրակութեան ներկայացուցիչ Աւետիս Ահարոնեանի գրիչով ստորագրուած Սեւրի դաշնագիրը, որ կը կրէ նաեւ դաշնակից ուժերու ստորագրութիւնն ու Ամերիկայի Միացեալ Նահանգներու կնիքը, հայ–թրքական կամ Հայ դատի կնճիռի հանգուցալուծման վաւերական ու միակ բանալին է եղած, եւ է՝ ցարդ։ Անիկա քաղաքական ուղի մըն է, որու գործադրութեան յանձնառութիւնը ստանձնած էին ատենի իրաւասու պետութիւններ, եւ կը մնան իրեււ այդպիսին, որովհետեւ միջազգային պարտաւորութեամբ ստորագրուած դաշնագիրները չեն ունեցած եւ չունին ժամանակի սահմանափակում։

Ահա այս է սեւրեան, այսպէս ըսած, թնճուկին բացատրութիւնն ու անոր անժամանցելիութիւնը պաշտպանող տրամաբանութիւնը։

Այդուհանդերձ, կայ մետալին միւս երեսը, ներհակ շահերու ռիբրիմ պայքարը։

Արդարեւ, պիտի ըսուի, այդ ե՞րբ է պատահեր, որ աշխարհաքաղաքական խօլ պատերազմներու եւ ագգակործան ծրագիրներու ահաւոր ներկայութեան, խօսուի պետութիւններու յանձնառու կեցուածքի մասին.

Ե՞րբ է տեսուեր, որ հզօր պետութիւններ, պահ մը մոռնալով իրենց գաղութարարի եւ շահամոլի ախորժակները, տէր կանգնին փոքր ժողովուրդի(ներու) իրաւունքին.

Ե՞րբ է արձանագրուեր, որ համայնակուլ աշխատանքի ձեռնարկած որոշումի կեդրոններ եւ քաղաքատնտեսական հսկայ ուժերու ներկայացուցչութիւններ, զիջին իրենց յափշտակիչի եւ թալանողի պահուածքէն, յանդու արժանապատիւ կեանք վարող ազգերու եւ պետութիւններու առաւել ամրակայման եւ զարգացման։

Միթէ երբեմնի ազատախոհ եւ մարդասէրի պիտակ հանդերձած եւրոպական երկիրները չէի՞ն, որ չըջան մը դաշնակցելէ ետք, դարձան իրարու վայրագ թշնամի եւ ռիբրիմ հակառակորդներ, մէկը՝ Միջագետքի եւ Պաքուի քարիւղին տիրելու, միւսը՝ միջինարեւելեան երկիրներու վրայ իր գաղութարարի իշխանութիւնը բանեցնելու։

Ազգերու ազատութեան ու անկախութեան ջատագով Ֆրանսան չէ՞ր, որ առանց խափանքի ու դաւաղրաբար, գիշերուան մութին մէջ, լքեց անգէն ժողովուրդ մը եւ փախուստ տուաւ Կիլիկիայէն։

Ալ չենք խօսիր քեմալական թուրքիոյ հետ թաքուն եւ բացայայտ զինակցութիւն կատարելու եւրոպացիներու եւ ռուսերու մարմաջները, որոնք կը միտէին պահել ու պահպանել իրենց աշխարհաքաղաքական ստորին շահերը եւ մասամբ նորին։

Ժամանակակից մարդկութիւնը, վերջին 100 տարուան ընթացքին, ճանչցած է նմանօրինակ անհաշուելի քաղաքական ու զինուորական պատուհասներ, որոնց պատճառով՝ Սեւրի դաշնագիրն անգամ դատապարտ–

ուեցաւ մնալու փոշոտած եւ տամկացած նկուղներու մէջ, օր մը վերստին լոյսին գայու երազանքով։

Ճիշդ է նաեւ այն, որ պետութիւններու կեանքին մէջ, աշխարհաքաղաքական հոյովոյթներ քարացած չեն մնար, այլ անոնք կ'ունենան նորովի դրսեւորումներ եւ կը ստեղծեն անակնկալներ։ Ասոր լաւագոյն ապացոյցը՝ Միջին եւ Մերձաւոր Արեւելքի վերջին յիսուն տարուան ապրած իրավիճակն է։ Աւելի՛ն. նոյնիսկ երբեմնի Եւրոպան ապրեցաւ ու կ'ապրի ցնցումներ եւ կը դիմագրաւէ ահաւոր սպառնալիքներ։

Վատահամբաւ, այլապէս խորամանկ ու ոճրամիտ թուրք քաղաքական համակարգը իր տարբեր դիմագիծներով կը շարունակէ իր բարբարոսի վարքագիծը՝ օգտուելով աշխարհաքաղաքական ընձեռուած կարելիութիւններէն։ Այդուհանդերձ, թուրքի գլխին կախուած կը մնայ Սեւրի դաշնագրի սուրբ, որմէ կը զգուշանայ ան, ամէն քայլափոխի։ Քրտական հարցն ու Սուրիոյ մէջ պատահածը լաւագոյն փաստերն են արձանագրուածին։

Արդ, այսօր, ինչպէ՞ս դիտարկել հայ պետականութեան ու քաղաքական մտքին ցուցաբերած շատ անգամ տհաս վարքագիծն ու անտեղի մօտեցումները, ինչ կը վերաբերի Սեւրի դաշնագրին։ Այսպէս ըսած, կրաւորականի եւ հանդուրժողի հայու պահուածքը երբեւէ չէ արդարացուած։ Անկախ Հայաստանի երկնակամարին տակ քաղաքական հեռահար հաշուարկներու կարօտը կ'ապրինք։ Փարոզաբոյր խօսքերը պարզապէս բարբաջանքներ են, ուրախացնող պղպջակներ։

Միջազգային դիւանագիտութիւնը, 21–րդ դարուն դարձած է ազդու գէնք մը, որուն տիրապետելու կոչուած ենք ազգովին։

Հայոց դիւանագիտութիւնը, իր տարբեր դրսեւորումներով ցարդ կը գտնուի պարզունակ հարթակի վրայ։ Հզօր ազգերու դիւանագիտական համակարգերը շատ անգամ կը սասանին ու կը դիմագրաւեն բազմաբնոյթ դժուարութիւններ։ Ալ ինչ խօսք փոքր պետութիւններու մասին։

Սեւրի դաշնագրի 100–ամեակի սեմին, վերանկախ Հայաստանի պետական կարգն ու սարքը պարտաւոր է ձերբազատիլ տղայական ու անհաճոյ վարքագիծերէ։ Հայոց պետութիւնը կոչուած է ստանձնելու այնպիսի յանձնառութիւն եւ քաղաքական հեռահար պարտաւորուածութիւն, որուն փայլատակող դրսեւորումներուն առանցքը՝ Արցախի ամբողջական ազատագրումն է՝ քաղաքական, տնտեսական, ընկերային թէ՛ այլ ճնշումներէ։ Սա հայոց ընկերաքաղաքական հարթակի մեծագոյն քննութիւնն է։

Եթէ երբեք հայութիւնը արցախեան ազատագրական պայքարով ցոյց տուաւ իր մարտունակ կամքի ու զոհողութեան պահուածքը, ապա հայ դիւանագիտութիւնը, իր կարգին, միջազգային ամպիոններու վրայ ինքզինք պէտք է գերազանցէ մե՛րթ առողջ ու արի կեցուածքներ ցոյց տալով, մե՛րթ անգիշողի եւ յարձակողապաշտի դիմագիծը յայտնելով, մե՛րթ Հայ դատի նուիրական պայքարին շունչ ու ոգի սերմանելով, բայց առանց խաբխափումի՝ Սեւրի դաշնագրի ռգին ու անժամանցելիութիւնը լոյսին բերելով։

Այո՛, հզօր Հայաստանի կայացումով՝ հայութիւնը պիտի կարենայ հասնիլ իր երազանքին։ 21–րդ դարու հրամայական պահանջը՝ կայացած, զարգացած եւ արդի պետութիւնն է, այլապէս հպարտօրէն կանգնիլ կարենալու հզօրներու շարքին։ Իսկ հայութիւնը ունի այդ ներուժը, որով կրնայ առինքնել ամբողջ աշխարհ։

Հիմնականը, սակայն, հայ քաղաքական մտքի առկայծումն է, մեծերու դիմաց ինքնուրոյն մտածելակերպ ունենալն է։ Այո՛, պահանջուածը՝ ներքին սթափումն է, քաղաքական մտքի ճարտարութիւնն ու արարատասէրի պահուածքը։ Ակնկալուածը՝ յստակ, տոկուն եւ կամքով շողախուած քաղաքական աշխատանքն է, հեռու թաւշեան քարոզներէ։

Համոզուած ենք, որ Սեւրը իրականութիւնը կը դառնայ այն ատեն, երբ հայոց պետական աւագանին ձերբազատի փտածութենէ եւ ինքնագոհ վարքագիծէ։ Ազգին ու պետութեան ղեկավարութիւնը ստանձնած այրերն ու կիները, չեն կրնար քմահաճոյքի գերին դառնալ եւ խաղքութեամբ առաջնորդուիլ։ Հոսհոսի ապրելակերպը ոչ մէկ թիզ հողի վերադարձը կ'ապահովէ։ Ընդհատաւոր, ժամանակները յարափոփոխ են եւ կրնան նպաստաւոր ելքեր ունենալ։

Ըսուած է, չէ, որ անկլոսաքսոնեան քաղաքական մտածողութիւնը ունի մէկ հիմնական յատկութիւն. ատիկա լուռ եւ հետազօտող աշխատանքն է բացառապէս։

ՀԱՄԲԻԿ ՊԻԼԱԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՆՏԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Յունիս 2017 - Յուլիս 2019



ԵՐԿԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ներկայացուած՝

**ՀՕՄ-ի 99-րդ եւ Գանատայի Շրջանի 24-րդ Պատգամաւորական
Ժողովին**

28, 29 եւ 30 Յունիս 2019

ԳԵՄՊՐԻՃ

ՆԱԽԱՐԱՆ

ՀՕՄ–ի ԱՄՆ–ի Արեւելեան շրջանէն անջատումէն՝ 1990–էն սկսեալ Գանատա–յի շրջանը իր պատգամաւորական ժողովները գումարեց ամէն տարի, իսկ 2009–էն ի վեր՝ երկու տարին անգամ մը։

Այդ թուականէն սկսեալ ՀՕՄ–ի ժողովներու թիւերը կը համապատասխանեն ԱՄՆ–ի Արեւելեան Շրջանի պատգամաւորական ժողովներու թիւին, որոնք չարու–նակուեցան գումարուիլ ամէն տարի։

Նկատի ունենալով վերոյիշեալ տուեալները՝ 2017–2019 նստաշրջանի աւարտա–կան պատգամաւորական ժողովը թուագրուեցաւ «ՀՕՄ–ի 99–րդ եւ Գանատայի Շրջանի 24–րդ ժողով»։

ՎԱՐՁԱԿԱՆ ԿԱԶՄ

ՀՕՄ–ի Գանատայի Շրջանային վարչութեան 2017–2019 տարեշրջանի առաջին ժողովը տեղի ունեցաւ Կիրակի, 2 Յուլիս 2017–ին, շրջանիս 23–րդ Պատգամաւորա–կան ժողովի աւարտին, Մոնթրէալի Հայ կեդրոնի սրահին մէջ, ներկայութեամբ ՀՕՄ–ի Գանատայի Շրջանային վարչութեան շրջանաւարտ եւ նորընտիր կազմերուն եւ 23–րդ Պատգամաւորական ժողովի ղիւանի ատենապետներուն՝ ընկՏ. Աննա Պուլկարեա–նի եւ ընկՏ. Անի Հոթոյեան ժողիի, ատենադպիրներուն՝ ընկՏ. Անի Թորիկեան Պապիկ–եանի եւ ընկՏ. Ֆլօրա Կիրակոսեանի։

Ժողովը միաձայնութեամբ կատարեց վարչական պաշտօններու բաժանումը հե–տեւեալ ձեւով.

Ատենապետ ԸնկՏ. Անի Օհանեան Լաւալ
Փոխ–ատենապետ/ գանձապահ ԸնկՏ. Վարդուկ Պէգճեան Մոնթրէալ
Քարտուղար եւ ատենադպիր ԸնկՏ. Մարալ Յովսէփեան Լաւալ
Հաշուապահ ԸնկՏ. Անի Գրալեան Մոնթրէալ
Խորհրդական ԸնկՏ. Ժօժօ Պետրոսեան Լաւալ
Խորհրդական ԸնկՏ. Սիլվի Օհանեան Թորոնթօ
Խորհրդական ԸնկՏ. Նաթալի Մանուկեան Համիլթըն
23–րդ Պատգամաւորական ժողովէն ընտրուած փոխ անդամներ–Քեպէգ
Ա.– Փոխ անդամ ԸնկՏ. Անի Թորիկեան Պապիկեան
Բ.– Փոխ անդամ ԸնկՏ. Ֆլօրա Կիրակոսեան
Գ.– Փոխ անդամ ԸնկՏ. Լիւսի Շահինեան
Օնթարիօ
Ա.– Փոխ անդամ ԸնկՏ. Գեղուհի Պասթաճեան
Բ.– Փոխ անդամ ԸնկՏ. Զեփիւռ Տորնա

Յուլիս 2018–ին, Գանատայի Շրջանային վարչութեան կազմի անդամ ընկՏ. Մարալ Յովսէփեան անձնական պատճառներով հրաժարեցաւ իր պաշտօնէն, զինք փոխարինեց ՀՕՄ–ի Գանատայի Շրջանի 23–րդ պատգամաւորական ժողովէն ընտր–ուած փոխ–անդամ ընկՏ. Անի Թորիկեան Պապիկեանը եւ ստանձնեց քարտուղար եւ ատենադպիրի պաշտօնը։

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

Ժողովներ – Շրջանային վարչութիւն
2 Յուլիս 2017 – 28 Յունիս 2019
Ժամանակաշրջանին, Շրջանային վարչութիւնս գումարեց 17 լիազումար ժողովներ, ինչպէս նաեւ շաբաթական դրութեամբ աշխա–տանքային նիստեր գրասենեակէն ներս, որոնց մեծամասնութեան միացան նաեւ Օն–թարիոյի շրջանի վարչական ընկերուհիները՝ համակարգչային (skype) կամ հեռաձայ–նային հաղորդակցութեամբ։

Վարչութիւնս լիազումար ժողովներուն ընթացքին բժախնդրութեամբ քննեց օրակարգերու իւրաքանչիւր հարց եւ կայացուց որոշումներ՝ ծրագիրներու կիրարկման համար։ Օրակարգերը ընդգրկեցին ՀՕՄ–ի 23–րդ Պատգամաւորական ժողովէն բխած բանաձեւերու իրագործում, Շրջանային վարչութեան տարեկան մնայուն ծրագիրներ, առցանց նուիրատուութեան դրութիւն, Կայքէջի վերանորոգում, գրպանի օրացոյց, հեռաձայնի տետրակ, հիմնադրամներու ուռւճացում, նոր ֆոնտեր, ՀՕՄ–ի Կեդրոնա–կան վարչութեան ծրագիրներ, յատկապէս՝ հաշմանդամ հայ զինուորի վերականգնո–ղական կեդրոնին, ՀՕՄ–ի Հիմնադրամի դրամահաւաք եւ տեսլական 2020 ծրագիր, ՀՕՄ–ի Կեդրոնական վարչութեան համահայկական ժողովի պատրաստութիւն եւ ժո–ղովիս ուշադրութեան յանձնուած այլ հարցեր։

Շրջանային վարչութեանս գործունէութեան տեղեկագրական եւ նիւթական մանրամասնութիւններու գրաւոր պատճէնները կը մնան վարչութեանս արխիւնե–րուն մէջ։

Վարչութեանս երդուեալ հաշուապահն է պրն. Մուրատ Արմութլուն, իրաւա–բանն է մեթր Արմենակ Գազանճեան։

Հաշուապահութեան աշխատանքները կը կատարուին Quick Pro ծրագրով։

Իսկ տուրքէ գերծ ստացագրերու ու վճարագրերու համար կ'օգտագործուի charitek համակարգչային ծրագիրը առաջացնելու համար տպագիր եւ առցանց օրի–նակներ։

Ներկայացուցչական դրութիւն

Մասնաճիւղերուն հետ մնայուն կապ պահելու, աշխատանքները հետապնդելու, ուղղութիւն տալու եւ խորհրդակցելու միտումով՝ վարչութիւնս հետեւեալ ներկայա–ցուցիչները նշանակեց մասնաճիւղերուն մօտ։

ԸնկՏ. Նաթալի Մանուկեան Համիլթըն, «Արեւ», Սենթ Գաթրինգ, «Արազ», Գեմպրիճ, «Մեղրի»
ԸնկՏ. Սիլվի Օհանեան Թորոնթօ «Ռուբինա», Միսիսոկա «Առագաստ»
ԸնկՏ. Ժօժօ Պետրոսեան Օթթաուա «Սեւան», Ուինծըր «Ռուբինա»
ԸնկՏ. Մարալ Յովսէփեան ապա ԸնկՏ. Թորիկեան–Պապիկեան Լաւալ «Շուշի»
ԸնկՏ. Անի Օհանեան Վանգուվըր «Արազ»
ԸնկՏ. Վարդուկ Պէգճեան Մոնթրէալ «Սօսէ»
Բոլոր ներկայացուցիչները հետեւողականօրէն կապի մէջ մնացին մասնաճիւղե–րու վարչութիւններուն հետ, ուղղութիւն տալու վարչական գործելակերպի մասին եւ լսելու իրենց դժուարութիւնները։

Մասնաճիւղերու այցելութիւններ

Այս տարեշրջանի ընթացքին Շրջանային վարչութիւնը մասնաճիւղերու այցե–լութիւնները կատարեց հետեւեալ ժամանակացոյցով։

Ուրբաթ, 27 Հոկտեմբեր 2017, Ուինծըր, «Ռուբինա»։
Շաբաթ, 28 Հոկտեմբեր 2017, Գեմպրիճ, «Մեղրի», Սենթ Գաթրինգ, «Արազ», Համիլթըն, «Արեւ»։
Կիրակի, 29 Հոկտեմբեր 2017, Թորոնթօ, «Ռուբինա», Միսիսոկա, «Առագաստ»։
Կիրակի, 12

Նոյեմբեր 2017, Օթթաուա, «Սեւան»։
Ուրբաթ, 9 Փետրուար 2018, Մոնթրէալ, «Սօ–սէ»։
Շաբաթ, 10 Փետրուար 2018, Լաւալ, «Շուշի»։

Այս այցելութիւնները մեծամասնութեամբ գումարուեցան լրիւ կազմով։

2017–2019 տարեշրջանի ընթացքին Շրջանային վարչութիւնը չկրցաւ պաշտօ–նական հանդիպում մը ունենալ Վանգուվըրի «Արազ» մասնաճիւղի վարչութեան հետ։

Այցելութիւններու ընթացքին արծարծուեցան իւրաքանչիւր շրջանի մտահո–գութիւններն ու դժուարութիւնները, անդամական վիճակը, ՀՕՄ–ի քարոզչական աշխատանքի կարեւորութիւնը, վարչութիւններու նիւթական պարտաւորութիւնները, մասնաճիւղերու մօտ վարչական անդամ գտնելու դժուարութիւնը եւ երիտասարդ ուժերու ներդրումը։ Ներկայացուեցան նաեւ ՀՕՄ–ի Գանատայի Շրջանի եւ Կեդրո–նական վարչութեան ծրագիրները։

1 եւ 2 Մարտ 2019–ին վարչութիւնս յատուկ այցելութիւն մը կազմակերպեց Ուինծըրի «Ռուբինա» եւ Համիլթընի «Արեւ» մասնաճիւղերուն, նկատի ունենալով երկու մասնաճիւղերու անդամական եւ աշխատանքային դժուարին կացութիւնը։

Ուինծըրի «Ռուբինա» մասնաճիւղի այցելութիւնը աւարտեցաւ մեծ յաջողու–թեամբ եւ բարձր տրամադրութեամբ, վարչութիւնս կարողացաւ գործնական քայլեր եւ հետաքրքրական ծրագիրներ առաջարկելով խրախուսել ներկաները։ Հանդիպման աւարտին, 4 նորագիրներ միացան ՀՕՄ–ի շարքերուն։

Համիլթընի «Արեւ» մասնաճիւղի պարագային, հանդիպումը նուազ արդիւնա–ւէտ էր։ Ներկայ էին միայն 4 երիտասարդներ, որոնց հետ հանդիպումի աւարտին յստակօրէն երեւան եկաւ մասնաճիւղը վերաշխուժացնելու եւ նոր անդամներ ներգ–րաւելու լուրջ աշխատանքի կարիքը։

Յետ այս հանդիպման, վարչութեան թելադրանքով, «Արեւ» մասնաճիւղի ատենապետ ընկՏ. Մելինէ Ճենապեանի եւ Շրջ. վարչութեան ներկայացուցիչ ընկՏ. Նաթալի Մանուկեանի ջանքերով՝ 4 նորագրեալներ միացան ՀՕՄ–ին։

Յարաբերական

Վարչութիւնս ներկայ գտնուեցաւ մասնաճիւղերու անդամական ժողովներուն, ձեռնարկներուն, տարեկան տօնաւվաճառի բացման հանդիսութեանց, ամէնօրեայ ու միօրեայ վարժարաններու հանդէսներուն եւ հիմնադրութեան տօնակատարութեանց։
Հոկտեմբեր 2017–ին Թորոնթոյի ՀՕՄ–ի Ընկերային գրասենեակի 30–ամեակի ձեռնարկին, գեկույցաբերներէն մէկն էր ընկերուհի Նաթալի Մանուկեան։

Երկուշաբթի, 12 Փետրուար 2018–ին, ընկՏ. Սիլվի Օհանեան ՀՕՄ–ի Գանատայի Շրջանային վարչութեան խօսքը փոխանցեց Թորոնթոյի հայկական վարժարանին ի նպաստ կազմակերպուած թելեթոնին։

Կիրակի, 29 Ապրիլ 2018–ին վարչութեանս անդամները ներկայ եղան Լաւալի «Շուշի» մասնաճիւղի 25–ամեակի տօնակատարութեան, ապա Կիրակի, 6 Մայիս 2018–ին, Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղի հիմնադրութեան 60–ամեակի տօնակա–տարութեան։

2018–ի Մայիս եւ Յունիս ամիսներուն ընթացքին վարչութեանս անդամները մասնակեցեան Հայաստանի Առաջին Հանրապետութեան 100–ամեակին առիթով կազմակերպուած բոլոր ձեռնարկներուն։

10 Յունիս 2018–ին վարչութեանս անդամները ներկայ եղան Օթթաուայի «Սե–ւան» մասնաճիւղի 25–ամեակի տօնակատարութեան, իսկ Սեպտեմբեր 2018–ին Վան–գուվըրի «Արազ» մասնաճիւղի 40–ամեակի տօնակատարութեան։

9–11 Օգոստոս 2018–ին ընկՏ. Անի Օհանեան Շրջանս ներկայացուց ՀՕՄ–ի ԱՄՆ–ի Արեւելեան Շրջանի պատգամաւորական ժողովին։

ՀՕՄ–ի զանազան ձեռնարկներու կողքին, վարչութեանս անդամները ընդառա–ջեցին ստացուած բոլոր հրաւէրներուն անխտիր եւ ներկայ եղան բոլոր քոյր կազմա–կերպութիւններու եւ պատկան մարմիններու հաւաքներուն, ժողովներուն եւ տօնա–կատարութեանց։

Յիշենք, թէ վարչութիւնս սերտ կապեր հաստատած է Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանին, ՀՅԴ Կեդրոնական կոմիտէին եւ տեղական մարմիննե–րուն ինչպէս նաեւ ՀՅԴ Գանատայի Հայ Դատի Շրջանային Յանձնախումբին հետ։

Միացեալ ժողովներ

Վարչութեանս հրաւէրով, 2017–2019 նստաշրջանի ընթացքին տեղի ունեցան 2 անդամական միացեալ ժողովներ, մասնակցութեամբ Լաւալի «Շուշի» եւ Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղերուն։

– Երեքշաբթի, 7 Նոյեմբեր 2017–ին՝ Մոնթրէալի Հայ կեդրոնի ճաշասրահին մէջ։

– Չորեքշաբթի, 7 Նոյեմբեր 2018–ին՝ Լաւալի Հայ կեդրոնի «Պարոնեան» սրա–հին մէջ։

Ժողովներու ընթացքին, սահիկներու միջոցաւ, ներկայացուեցան Շրջ. վարչու–թեան տարեկան ծրագիրները, նիւթական յատկացումները, նոր հաստատուած հիմ–նադրամները եւ Կեդրոնական վարչութեան ծրագիրները։

Այս ներկայացումները կատարուեցան Օնթարիօ շրջանի մասնաճիւղերու ան–դամական ժողովներու ընթացքին եւս։

Միջ–վարչական ժողով

Միջ–վարչական ժողովը տեղի ունեցաւ Շաբաթ, 20 Հոկտեմբեր 2018–ին, Թո–րոնթոյի Հայ կեդրոնէն ներս։ Ուրախութեամբ կ'ուզենք յայտնել, թէ այս հանդիպման ընթացքին Շրջանային վարչութեան կազմի կողքին, ներկայ էին նաեւ 10 մասնաճիւ–ղերու վարչական ընկերուհիներ՝ թիւով 47։

ՀՕՄ–ի Կեդրոնական վարչութեան գեկոյցը փոխանցեց ընկՏ. Վարսենիկ Սար–գիսեան, ապա ատենապետ ընկՏ. Անի Օհանեան սահիկներ օգտագործելով, ներկայա–ցուց վարչութեանս միամեայ գործունէութիւնն ու նիւթական յատկացումներու պատկերը։

Ժողովի դաստիարակչական բաժինը ընդգրկեց 2 դասախօսութիւն/աշխատա–նիստ՝

Ա.– ՀՕՄ–ի պատկանելիութիւն– դասախօս ընկՏ. Հուրի Նաճարեան
Դասախօսութեան աւարտին ընկՏ. Հուրի Նաճարեան այս նիւթին չուրջ պատ–րաստուած հարցարան մը բաժնեց մասնակիցներուն։

Բ.– Ժողովաւարական կանոններ եւ վարչական պատասխանատուութիւններ (How to prepare for an orderly meeting)– դասախօս ընկՏ. Նազիկ Հանէշեան
Սոյն ժողովը արժանացաւ ներկայ ընկերուհիներու բարձր գնահատանքին։
Մեկնելով նախորդ տարիներու սովորութենէն, երեկոյեան ընթրիքին վարչու–թիւնս հրաւիրեց նաեւ Օնթարիօ նահանգի նախկին Շրջանային վարչութեան անդամ–ներ, ստեղծելով մասնաճիւղերու վարչական անդամներուն հետ փոխադարձ ծանօ–թացման առիթ։

ՄԱՍՆԱԾԻՒՂԵՐՈՒ ԹՈՒԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ 2017 - 2019

	Անդամական Պատկեր						Ժողովներ	
	Անդամներ 1-06-2017	Նոր անդամ	Մասնաճիւղին փոխանցուած	Մասնաճիւղէն փոխանցուած	Մահացած/այլապէս նուազած		Անդամներ 31-05-2019	Անդամական Վարչական
Արեւ Համիլթըն	29	4	1	2	2	30	19	20
Մեղրի Գէմպրիճ	42	-	1	1	1	41	13	16
Սեւան Օթթաուա	35	-	-	-	-	35	14	14
Առագաստ Միսիսոկա	22	-	-	-	3	19	14	8
Արազ Սէնթ Գաթրինգ	21	1	-	-	4	18	9	11
Ռուբինա Ուինծըր	13	7	-	-	2	18	15	15
Շուշի Լաւալ	191	17	6	-	9	205	18	77
Արազ Վանգուվըր	45	2	7	-	1	53	15	15
Ռուբինա Թորոնթօ	451	9	17	-	69	408	22	70
Սօւէ Մոնթրէալ	390	20	10	3	17	400	20	70
ԸՆԴՀԱՆՈՒՐ	1239	60	42	6	108	1227	159	316

Սուբիահայ երեխաներու կադանդէք

Վերջին պատգամաւորական ժողովէն ըխած թիւ 2 բանաձեւին համաձայն մաս-նաճիւղերը իւրաքանչիւր անդամի համար վարչութեանս պիտի փոխանցեն US\$7 որ-պէս կադանդէք սուբիահայ մանուկներուն։ Սոյն բանաձեւին համաձայն, երկու տարուան համար Կեդրոնական վարչութեան փոխանցեցինք US\$16,800։

Սոյն օժանդակութիւնը յատկացուեցաւ Հալէպի Ազգային միացեալ վարժարանի մանկապարտէզի եւ նախակրթարանի աշակերտութեան, ՍՕԽաչի աշխատանոցէն ներս ձմեռնային զգեստներ պատրաստելով 1,050 աշակերտներու, միեւնոյն ժամանակ գործի առիթ ստեղծելով չրջանի հայ կիներուն։

ՀՕՄ–ի ննջեցեալներու հոգեհանգիստ

Վարչութեանս խնդրանքով, Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդի կոչը ուղղ-ուեցաւ Գանատայի Կիլիկիոյ Թեմի Առաքելական բոլոր եկեղեցիներուն, եւ հոգե-հանգստեան պաշտօն կատարուեցաւ ՀՕՄ–ի շարքերէն առյաւէտ բաժնուած ընկերու-հիներու ու բարերարներու յիշատակին, Կիրակի, 25 Փետրուար 2018–ին եւ Կիրակի, 24 Փետրուար 2019–ին։

Առցանց նուիրատուութիւն

Ըստ շրջանիս 23–րդ պատգամաւորական ժողովէն ըխած թիւ 7 թելադրանքին եւ արդիական միջոցներու հետ քայլ պահելու միտումով, Շրջանային վարչութիւնը որդեգրեց առցանց նուիրատուութիւններ ստանալու գրութիւն՝ աւելցնելով «Donate Now» կոճակը իր կայքէջին վրայ։

Այս ուղղութեամբ, զանազան պրպտումներ կատարելէ ետք, վարչութիւնս որո-շեց գործակցիլ CanadaHelps բարեգործական կազմակերպութեան հետ, որուն տրա-մադրած հարթակը օգտագործելով կրցաւ կայքէջին ընդմէջէն ստանալ առցանց նուիրատուութիւններ եւ անմիջապէս ուղարկել համապատասխան տուրքէ գերծ ստա-ցադրերը։

Վարչութիւնս մեծապէս կը գնահատէ ընկհ. Սիլվի Օհանեանի հետեւողականու-թիւնը եւ կատարած բծախնդիր աշխատանքը, ի շահ ծրագրի իրականացման։

Հայաստանազնացութիւն

ՀՕՄ–ի Գանատայի Շրջանային վարչութեան Հայաստանազնացութիւնը տեղի ունեցաւ 3–15 Սեպտեմբեր 2017–ին։ Շրջապտոյտի գլխաւոր նպատակն էր ՀՕՄ–ի անդամ ընկերուհիներու եւ ազգայիներու առիթ տալ ներկայ գտնուելու Ստեփանա-կերտի նորակառոյց «Սօսէ» մանկապարտէզի պաշտօնական բացման հանդիսութեան։ Խումբը այցելեց Հայաստանի եւ Արցախի տեսարժան վայրեր, ներկայ եղաւ Ար-ցախի նախագահ Բակօ Սահակեանի հրաւէր–հիւրասիրութեան եւ ՀՕՄ–ի Հայաստանի Շրջանի 25–ամեակի տօնակատարութեան։

Պտոյտին մասնակցեցան 50–է աւելի ՀՕՄ–ուհիներ եւ համակիրներ, որոնք իրենց ներկայութեամբ եւ նիւթական թէ բարոյական մասնակցութեամբ քաջալերեցին բոլոր հանդիսութիւնները եւ սատար հանդիսացան Հայաստանի, Արցախի եւ հայրե-նիքէն ներս գործող ՀՕՄ–ի աշխատանքներուն։

Շրջապտոյտ–սեմինար Վանգուվըրի մէջ

Կազմակերպութեամբ Հայ Օգնութեան Միութեան Գանատայի Շրջանային վարչութեան, Վանգուվըրի չրջապտոյտը տեղի ունեցաւ 18–23 Սեպտեմբեր 2018–ին։ Երեքշաբթի, 18 Սեպտեմբերին, 52 անդամներ եւ համակիրներ դիմաւորուեցան Վանգուվըրի «Արազ» մասնաճիւղի վարչական անդամներու կողմէ։ Նոյն երեկոյ-եան, «Արազ» մասնաճիւղի վարչութիւնը բարի գալուստի ընթրիք մը կազմակերպեց Century Plaza պանդոկի սրահներէն մէկուն մէջ։

Յաջորդող երկու օրերուն, խումբը այցելեց տեսարժան վայրեր եւ մասնակցեցաւ պտոյտներու՝

